

նում հրատարակվող «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Սովետական գրականություն», «Լիտերատուր-նայա Արմենիա», «Գրական թերթ» պարբերականներում, ինչպես նաև Թբիլիսիի գիտական, գրական պարբերականներում, ղեկուցումներով հանդես են գալիս «Գիտելիք» ընկերության, Թբիլիսիի ժողկրթբրամնի մեթոդական կարիքների գծով, գրողների տանը և այլուր, մասնակցում են գիտական նստաշրջաններին, միութենական կոնֆերանսներին և խորհրդակցություններին, մշակում են միջնակարգ դպրոցում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի հարցերը:

Կուզեինք հիշատակել նաև, որ ամբիոնի ղեկավարությամբ հետաքրքիր թեմաների վրա են աշխատում Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանց լեզվի դասախոս Ա. Բարսեղովան և Թբիլիսիի № 38 միջնակարգ դպրոցի ուսանց լեզվի և գրականության դասատու Ռ. Շախգուլովը: Երկուսն էլ ուսական կրթություն են ստացել և այժմ մասնագիտանում են հայ գրականության բնագավառում: Ա. Բարսեղովան աշխատում է «Հայ մշակույթի

և գրականության հարցերը «Կավկազ» թերթում (1846—1918 թթ.): իսկ Ռ. Շախգուլովը՝ «Հայ մշակույթի և գրականության հարցերը Թբիլիսիի ուսական պարբերականներում (սովետական շրջան, 1921—1971 թթ.):» թեմաների վրա:

Ամբիոնի կազմի անի և աշխատանքների ծավալման ու խորացման հետևեցողները շատ են: Պատմա-բանասիրական ֆակուլտետի ծրագրով դեռևս աշխատում է միայն առաջին կուրսը: Հաջորդ ուսումնական տարիներին կավելանան երկու ֆակուլտետի երկու կուրսեր և, բնական է, բանասիրական նոր առարկաներ, նոր մասնագետներ: Հնարավորություններ կընձևվեն լայնացնելու գիտական հետազոտությունների և ուսումնա-մեթոդական աշխատանքների շրջանակները:

Ա. ՄԵԻՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ա. Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայերեն և ադրբեջաներեն լեզուների և գրականությունների ամբիոնի վարիչ:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ricerca sull' Architettura Armena. No 3, Bibliografia. 65 p.

«Հետազոտություններ հայ ճարտարապետության մասին» ընդհանուր խորագրով լույս տեսնող այս մատենաշարի № 3-ում հրատարակված 1, Արմեն Զարյանի, Ադրիանո Ալպագո Նովելլոյի և Հերման Վահրամյանի կազմած հայ ճարտարապետության մատենագրությունը:

Մինչև այժմ հրապարակված մատենագրական ցանկերի (Ա. Սալմասյան, Ե. Ութույան և ուրիշներ) համեմատությամբ այս մատենագրությունը ամենածավալունն է. նրանում ընդգրկված են ավելի քան 850 հեղինակների աշխատությունները հայ ճարտարապետության վերաբերյալ: Գրքի վերջում զետեղված են մատենագրական ցանկում նշված պարբերական հրատարակությունների հապավումների և օգտագործված աշխատությունների ցանկերը:

Միլանի պոլիտեխնիկ հումանիտար գիտությունների ինստիտուտի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի համագործակցությամբ և Մանուկյան ֆոնդի նախաձեռնությամբ լույս ընծայվող այս հրատարակության երկրորդ հատորում զետեղված են Միլանի պոլիտեխնիկ հումանիտար գիտությունների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի հայագետների կողմից 1968—1970

թթ. ընթացքում Բտալիայի զանազան քաղաքներում, Վիեննայում, Բուենոս-Այրեսում, Աթենքում, Երուսաղեմում և այլ վայրերում կազմակերպված հայ ճարտարապետության վերաբերյալ ցուցահանդեսային նյութեր: Այդ ցուցահանդեսների կազմակերպմանը օգնել են Իտալիայի հայ մշակութային միության, Բուենոս-Այրեսի հայ գաղութի ներկայացուցիչները և ուրիշներ: Խորհրդակցությունները և դասախոսությունները վարել են Ադրիանո Ալպագո Նովելլոն, Արմեն Մանուկյանը, Հարություն Գազանճյանը, Հերման Վահրամյանը և Պաոլո Կունենո: Հատորում կան նաև տեղեկություններ պատմական և Սովետական Հայաստանի հուշարձանների ուսումնասիրության նպատակով իտալացի և հայ ճարտարապետների բազմաթիվ ճանապարհորդությունների մասին: Հատորի վերջում տպագրված են Սովետական Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետական հուշարձանների, այդ հուշարձանների սե-սպիտակ կամ գունավոր լուսանկարների ցանկերը և Միլանի պոլիտեխնիկ հումանիտար գիտությունների ինստիտուտի հայագիտական կենտրոնի ֆոնդերում գտնվող հայ ճարտարապետությանը և ընդհանրապես հայ մշակույթին նվիրված գրականության ցուցակը:

ԳՅՈՒԼԻԽԱՆՃՅԱՆ ՌՈՒԲԵՆ. Վարդանանց ճակատամարտի ընկերային ու տնտեսական դրդապատճառները: Բեյրութ, Հայկազյան Գոլեթ, 1970, 67 էջ:

Այս աշխատությունը բաղկացած է ներածականից և երեք գլուխներից: Իր ուսումնասիրության նյութը դարձնելով Վարդանանց ճակատամարտի առավելաբար հասարակական ու տնտեսական դրդապատճառները, հեղինակը չի սահմանափակվում միայն 451 թ. դեպքերի ու դեմքերի մասին խոսելով, այլ քննարկման է ենթարկում ամբողջ մարզական շրջանը (428—640 թթ.), ցույց տալով, թե ի՞նչ նպատակներ էին հետապնդում հայ նախարարները, հայ եկեղեցին, պարսիկ արքունիքը և պարսիկ մոզերը: Սույն նպատակին հասնելու համար կարևոր է տալ այդ օրերու քաղաքական, եկեղեցական պատմության հիմնական գծերը, ինչպես նաև հայ աշխարհի ընկերային կառույցը և հարկային դրությունը ամփոփ գիծերու մեջ,— նշում է հեղինակը իր ներածական խոսքում: Նկատի ունենալով, որ 451 թ. Հայաստանը Պարսկաստանի մի նահանգն էր և ոչ թե անկախ պետություն, Գյուլխանձյանը Վարդանանց ճակատամարտը համարում է Պարսկաստանի ներքին խնդիրներից մեկը:

Գրքի առաջին գլուխը վերնագրված է «Հայ ժողովրդի ընկերային հասարակական դրու-

թյունը IV—V դարերում»: Այստեղ մանրամասնորեն քննարկված են իրանական կրոնի, երկրի պետական կառուցվածքի, տնտեսության բնույթի ազդեցության հարցը, հայ ավատատիրականության տնտեսական ու վարչական դրույթյան խնդիրը պետական ու իրավական տեսակետից, պարսիկ կառավարության քաղաքականության, դեռևս Ավարայրի ճակատամարտին նախորդող շրջանում գոյություն ունեցող բարբերի այլասերման, Մամիկոնյան տոհմի հասարակական դիրքի, լուսավորչի ներկայացուցիչների, պալատի և սպարապետի փոխադարձ շահերի հարցերը: Նրկրորդ գլխում խոսվում է Արշակունյաց և մարզպանության շրջանի հարկերի, «աղատներից» ու «ոստանիկներից», «ռամիկներից» ու «շինականներից» կազմված հարկատու դասի մասին, իսկ երրորդ գլխում ուսումնասիրված է IV և V դարերում հայ հոգևորականների կամ եկեղեցական դասի մղած տնտեսական ու մշակութային պայքարը:

Գիրքը հարուստ է հայ պատմիչներից բերված տվյալներով ու վկայություններով, փաստերով ու կարծիքներով:

ՊՈՂԱՐՅԱՆ ՆՈՐԱՅԻՐ. Մաշր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց: Հատուր Հիմգեռոդ: Նուսադեմ, Տպարան Սրբոց Հակոբյանց, 1971, 606 էջ, նկարազարդ

Այս արժեքավոր հրատարակության հինգերորդ հատորում ընդգրկված են Նուսադեմի 335 ձեռագրերի նկարագրությունները (ձեռագրատան 1366—1700 համարների ձեռագրերը): Գրքում գետնի վրա են նաև 70-ից ավելի բնագրեր, որոնք արժեքավոր են պատմական ու մատենագրական տեսակետից: Գրքի այս հատո-

րը ևս, ինչպես նախորդները, պարունակում է մանրանկարչական ավելի քան վեց տասնյակ նմուշներ, որոնցից առանձնապես կարևոր են Շարակնոցներից բերված օրինակները: Հատորն օժտված է նաև բնագրերի, նկարների, հատուկ անունների օժանդակ ցանկերով և ժամանակագրական ցուցակով:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նիկոմիդիո և շրջակայից: Վենետիկ, Ս. Ղազար, 1969, 91 էջ:

Գիրքը բաղկացած է երկու: րամիսներից, որոնցից առաջինը (էջ 11—63) պատրաստել է Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփանոս արք. Հովակիմյանը, իսկ երկրորդը (էջ 65—79) կազմել է Մկրտիչ վարդապետ Աղավնունին (Հարություն Քյուրդյանի ծանոթագրություններով, որը Կ. Պոլսում իր հետազոտությունների ժամանակ գտել է Մկրտիչ Աղավնունու կազմած ձեռագիր ցուցակը):

Հատորում ընդգրկված գույգ ցուցակների հրատարակությունը հատուկ արժեք ունի, քանի որ հրբեմնի բարգավաճ և հայաշատ Նիկոմիդիայի վիճակը այլևս գոյություն չունի և նկարագրված ձեռագրերը առ այսօր համարվում են կորած:

Գրքի վերջում գետնի վրա են Հովակիմյանի և Աղավնունու ցուցակների հատուկ անունների և անձնանունների ցանկերը:

ԳՈՒՇԱԳՃՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ և ԽՆԴՐՈՒՆԻ ՏԻԳՐԱՆ. Անգլերեն—հայերեն արդի բառարան: Բեյրութ, Հրատ. Կ. Տոնիկյան և Ուղիք, 1970. 949 էջ:

Այս բառարանում ընդգրկված են շուրջ 40.000 դործնական և անհրաժեշտ բառեր, իրենց պարզ, բարդ, ածանցյալ՝ նույն ընտանիքին պատկանող ղանազան ձևերով: Գիտատեխնիկական, տնտեսաքաղաքական և այլ դժվար հասկանալի բառերի դեպքում տրված են դյուրամատչելի և ընդարձակ բացատրություններ, իսկ բառերի բոլոր առումները արձանագրված են անհրաժեշտ մանրամասնություններով և հոմանիշներով:

Նկատի ունենալով անգլերենի ոճաբանական բնույթը, բառարանում ընդգրկված են շուրջ

10.000 գրական ու ժողովրդային ոճեր և դարձվածքներ: Հնչարանության հարցում հիմնականում Օքսֆորդյան շկոլային հետևելով հանդերձ, որոշ դեպքերում տրված են նաև ամերիկյան և այլ նրբերանգներ:

Հեղինակները իբրև աղբյուր օգտագործել են անգլիական և ամերիկյան առձեռն և գրքայանի հանրածանոթ բառարաններ, հանրագիտարաններ, ինչպես նաև անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն և հայերեն բացատրական բառարաններ:

ԳԱԶԱՆՃՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ. Պատմություն հայ գրականության: Ա. հատոր (սկիզբեն մինչև ԺԹ դար), Եվդոկիա, 1914: Բ. հատոր (ԺԹ դարու կեսերեն մինչև մեր օրեր), Եվդոկիա, 1915: Տպարան Կարողիկոսության հայոց Մեծի Տանն Կիլիկիո, Անրիկիաս, Լիբանան, 1970. 265 էջ:

Բանասեր, ուսուցիչ և լեզվաբան Հովհաննես Գաղանճյանը (1870—1915 թթ.) մեծ եղևունի նահատակներից է: Նա աշխատել է իր այս երկի մեջ սեղմ ձևով ներկայացնել հայ գրականության պատմության բոլոր շրջանները՝ իրենց բնորոշ հատկանիշներով, գրական բուլբուլը նշանավոր դեմքերը, ինչպես նաև հին, միջնադարյան ու ժողովրդական հայ բանաստեղծությունը:

Գիրքը խիստ համառոտ է, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր պրոզի մասին խոսելիս, բացի կենսագրական շոր տեղեկություններից, հեղինակը աշխատել է ներկայացնել նախ դրողի գործերը, ապա՝ գլխավոր գործերի բովանդակությունը, ոճն ու լեզուն: Գրքին կցված են հատվածներ հին ու նոր հայ նշանավոր մատենագիրներից, գրական բոլոր շրջաններից և բոլոր սեռերից վերցրած. որոնք ավելի ցայտուն են դարձնում հեղինակների ինքնուրույնությունը և առանձնահատկությունները:

«Ներկա դասագիրքով.— գրում է հեղինակը իր առաջաբանում,— մենք առաջադրած ենք տալ ո՛չ միայն հայ գրականության, այլև հայ լեզվի պատմությունը, ներկայացնելով անոր ղանազան շրջաններն ու կրած շրջափոխությունները: ... Ասոր հետ մեկտեղ, յուրաքանչյուր դարու և շրջանի հատուկ գրական ու լեզ-

վական երևույթներն ու մատենագրական ուղղությունները ներկայացնելու ատեն, մենք անցողակի մատնանիշ ըրած ենք այն քաղաքական և կրոնական դեպքերն ու երևույթները, որոնք ծնունդ տված են այս ու այն մատենագրական ուղղության, կամ այս ու այն կերպով ազդած են հայ մատենագրության ու լեզվին վրա»:

Հ. Գաղանճյանը հայ գրականության պատմությունը բաժանում է չորս շրջանների՝ հին, միջին, նոր և արդի: Գրքի առաջին հատորում ընդգրկված են առաջին երեք շրջանները, այսինքն՝ հայ գրականությունը սկզբից մինչև XIX-րդ դարի կեսը: XIX դարի կեսերից մինչև 1914 թ. գրականությունը ներկայացված է երկրորդ հատորում: Արդի հայ գրականության հատորում ընդհանուր տեսությունից հետո առանձին-առանձին ներկայացված են արևմտահայ և արևելահայ գրողները:

Այս գիրքը պատրաստված է եղել Իզմիրյանց հանձնաժողովի միջոցով Խաչատրյան մրցանակին ներկայացնելու համար: Հապճեպ պատրաստված այս աշխատության մեջ որոշ ճշտումներ, թվականների լրացումներ և ծանոթություններ կատարել է Կիլիկիայի կաթողիկոսարանի ռպրեզանթի դասախոս Խորեն Գաբրիելյանը:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ